# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**31 հոկտեմբերի 2025 թվականի N 513-Ա**

**«ԽՆՁՈՐԵՍԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՈՐԵՆ ԱՇՈՏ ԹԵԼՈՒՆՑԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿ ԹԱՄԱՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և 161-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Թելունցի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշոտ Թելունցին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա և լրացուցիչ արձակուրդը՝ 22 աշխատանքային օր՝ 2025թ. նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 2-ը ներառյալ:
2. Ա. Թելունցի արձակուրդում գտնվելու ընթացքում «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարումը վերապահել ընտանեկան բժիշկ Թամարա Համբարձումյանին:

2025-10-31 16:54:43 GMT+4
Հավաստված է ՄԻԴ-ի կողմից

mID

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 31
ք. Կապան